ւոր շինութիւնների արձանագրութիւններից՝ Շիրուանի շահերն էին։

Դոցա աթոռանիստը ձմեռ ժամանակ լինում էր Բագուն, իսկ ամառը ռահմանագլխի վրայ գտնուող ամառանոցը, որ Բագուից 30 վերստ հեռու է և կոչվում է Նեվելեան կամ Շահ—Վեալեան (այսինքն Շահի ամառանոց)։

Այն ժամանակից ի վեր երբ Պարսից Իսմայէլ Ա. Շահը (յամի Տեառն 1500) նուաճեց (1500 ՋԽԹ. Պատմ. Զամչեան Գ. 511.) Կասպեան նահանգները և ոչնչացրեց Շիրվան շահի ցեղը, այդ նահանգը մինչեւ 17րդ դարու վերջը կառավարւում էր պարսիկ իշխաններով, որոնք նշանակւում էին Սոֆիական հարստութեան թագաւորներից։ 18րդ դարու սկզբում, երբ Բագուն իր գաւառով հազիւ միայն 4000 ծուխ ունէր, կառավարւում էր ոչ թէ ինքնուրոյն զեկավարներով, այլ, ինչպէս վկայում են հին բնակիչները, հէնց նոցա միջի այնպիսի անհատներով, որոնք վարում էին իշխանութիւն ոչ այնքան ժողովրդի ընտրութեամբ, որքան իրանց հարստութեան ուժով։

Մինչեւ անգամ մի հնդիկ՝ այդ ժամանակի հարուստներից մէկը, որը տեղափոխուել էր Բագու գրաւուած կրօնական ջերմեռանդութեամբ և եկած դէպի Զրադաշտի հետեւողների սրբազան կրակը[1]), 10 տարի կառավարեց Բագուայ բոլոր ազգաբնակութիւնը, չմերժելով երբէք իրան դիմող կարօտեալ թուրքերին այլեւայլ նիւթական օգնութիւններ։

Բագուայ հանքերի արդիւնքը գնում էր յօգուտ Շամխալ Տարնովսկու սորա հաւատարմատարի միջոցով, որին ինքն էր նշանակել։ Դա բնակւում էր փոքրաթիւ խումբ գիննւորուած Լէզգիների հետ Բագու քաղաքից 20 վերստ հեռու Մաշտաղա գիւղում։ Բայց երկու դէպք, որոնք պատահեցան մէկը միւսի յետեւից փոխեցին իրերի դրութիւնը։ Նախ՝ Նվալանում սպանուեցաւ հնդիկ կառավարիչը, թուրք գեղեցկուհի առեւանգելու համար, երկրորդ Մաշտաղումն էլ սպանուեցաւ Շամխալի հրամանատարը։

---

[1]) Կրակը Սուրախանի կոչուած տեղի ինքնաբուղխ կրակն է, ուր է և կրակի մեհեանը։